

ԼԵԶՎԱԿԱՆ ՄԱՆՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I

Փոխազգական՝ ուղի—հայ

Հայ ժողովուրդը կովկասյան-լեռնական աղջերից ամենա-
անբու ըարեկամական հարաբերություն ունեցել է Աղվանից
ուղի աղբի հետ՝ հնազույն դարերից սկսած մինչև այսօր ևս:
Այդ անխախտ հարաբերության հետևանքով, բնականորեն, կա-
տարվել է փոխազգացություն ոչ միայն կենցաղական, այլև լեզ-
վական բնագավառում:

Ուղիական կոչորդախոս և անմշտի լեզուն, հարկավ, շատ
ավելի պետք է ենթարկվեր հայ մշակված, ճկուն և հարուստ
լեզվի աղբեցության:

Սակայն ոչ սակավ ուղիական բառեր ևս կիրառված կան
հայ մատենագիրների երկերում:

Բաղձաթիվ օրինակների մանրամասն շարահարը թողնելով
հետադային՝ այստեղ տալիս եմ մի քանի ընդուն իմուշներ:

1. «Հիկեմ» (կամ հիբար) — ինչպե՞ս, որպե՞ս իմաստով գոր-
ծածված է Մ. Խորենացու Հայոց պատմության գիրք Գ. գլ. ԿԲ
«Ի վարդապետսն...» հատվածի մեջ՝ հետևյալ արտահայտությամբ.
«Հիկէն արփուոյն հեղեալ զծագումն յերկաքանչիւր դօտիսն, և
անցնիւր դօտիքն ի ձեռն արեղական ընձուրն, այսպէս և մեք
յաւէտախաղաց շնորհիւ ցոլացեալ յիմանալի ճառագայթից հո-
ղեւոր հարցն...»

Նույն այդ բառը միևնույն՝ ինչպե՞ս, որպե՞ս իմաստով այ-
սօր կիրառվում է ուղի լեզվի՝ մանավանդ Նիժ գյուղի բարբա-
ռի մեջ՝ այսպես ուղիներեն՝ է°, հէ°, հիբ—ի՞նչ:

է՞կա, հէ՞կյան, հիբ՞կյան—ի՞նչ է:

Կէնա (կէն), կէնան, կէնանկյ—պես:

Է՛կէնա, հէ՛կէնան, հիկէնանկյ—ինչպես:

է՞, հէ՞, հի՞ աշվի բու մէյա—«ի՞նչ գործ ունիս այստեղ»:
 Էլ կե՛նա աշբային (ու), տէ՛թնր ալ քնորրուխօ } (ի՛նչպես աշխատես
 Հեկե՛նն անբանու, տէ՛թնր ալ քնորխօնու: } (գործ անես), այն-
 Հիկե՛ննից անբանու, տէ՛թնր ալ քնորխօ՛նու: } պես էլ կապրես:
 Էկա՞վա բուկա. }
 Հիկյա՞նն չուրէ՛սա: } Ի՞նչ ես ուզում. դի՛մն խնդրեսդ:

Պարզ է՝ ուղիական բառը փոխառված է հայ լեզվի կողմից:
 2. Հարանման փոխառումն է նաև «քեթուք» (թեթուք) բա-
 ռը՝ եզնիկ կողբացու կիրառմամբ:

Եզնիկ. «Եզ՞ աղանդոյ հեթանոսաց» ԺԲ. էջ 48:

«Զի ոչ եթէ ստուգյալ գիտէր, եթէ այնու նմա ֆլաս ինչ
 գործել կարիցէ, այլ կարծեօք ի թեթուս մատուցեալ, եթէ լինիցի
 թէ չլինիցի»:

Զի ոչ քե ստուգած գիտեր, քե նրանով նրան մի վնաս պատ-
 նաւել կկարողանա, այլ կարծիքով այս-ուչի ենթարկվելով՝ քե կի-
 նի՞ (կհաջողվի՞), քե չի՞ լինի:

Ուղիներն այսօրվա կենդանի լեզվում.

ա) Աբա՞ քե՛տու՝ բուտուխ, քե՛տուխ բու:

Դիտակ չէ՞ ունի՞, չունի (ոչ ունի):

բ) Ուկան՞ մէ այլուն մուզ թէ՛տուխ բու:

Կարծես՝ այս երեխան լեզու չունի (ոչ ունի):

գ) Մէ իշէ՛ թուրմուխ դո՛ւրմն քե՛տուխ մանդէ:

Այս մարդու ստներն առողջ չի (չեն) մնացել:

դ) Նաման՞ քե՛տու ակի՛ իչ գարախ, բուտուկսա ակսո՛ւն:

Մայրը չէ (չի) տեսել իբ աղային. ուզում է տեսնել:

3. Թուր, առաթուր—առ:

ա) Թուրի՛ն սկա սաքսուն:

Առաքուր արկանել:

բ) Էքէ՛ բիալ թուրտուխ բու:

Զին չորս տա ունի:

գ) Մէ իշէ՛ թուրմուխ թէ՛տուխ կանփէ:

Այս մարդու ստները չի (չեն) ցավել:

դ) Բաւրէլ չուրփանան ուսին թաղէ՛ն:

Ոտի կանգնեցեք շուտ երթանք:

4. Ծորօ՛, ծորօկա՛լ, ծորեռա՛ւն:

Ծոր, ծորակ, ծորել:

ա) Ծորոկալախօ խէ ծորօ՛նէխա ալակուն բօշ:
Ծորակից ջուրը ծորում է բաժակի մեջ:

5. Կատ-կաթ (կաթիլ):

ա) Աղալան ալախօ կատկատե-խա բէշ, բէշ:
Անձրեղ վերկից կաթկաթում է մեր գլխին:

բ) Աղալին կատուրոն ռւղոն^Ա կատկունէխա^Ա կատկունա՛:
Անձրեկ կաթիլները կատուրից կաթում են կաթոցում:

II

Իւրաքանչիւր.

Իւրաքանչիւր.

«Իւրաքանչիւր» բառը շատ է զբաղեցրել թե՛ հայ և թե՛ ասոր մի շարք հայագետների, որոնք այլևայլ կերպով փորձել են վերլուծել զրա կազմութիւնը՝ կառուցվածքի տարրերը, և բացատրել զրանց զուգորդութիւնից բխող իմաստը: Մակայն մի տրոշակի ընդհանուր եզրակացութեան չեն հանգել:

Բայց ինչո՞ւն է այդ բառի ճիշտ վերլուծման խոչընդոտող դժվարութիւնը: Նույնատիպ՝ իւրաքանչիւր, իւրաքանչիւր, իւրաքանչիւր, իւրաքանչիւր և այլն բառերը պարզ, դուրսը մտնելի են, և կազմութիւնն ինքն է հայտնում իր զուգորդ իմաստը. իսկ «Իւրաքանչիւր»-ի իմաստը քողարկված է և «մեքենայորին» է յուրացվել, բռնաբերվել:

Պրոֆ. Անառայանի «Արմատական բառարանում» մեջ բերված այդ բառի վերլուծական փորձերի օրինակները հետևյալ մեակերով են պատկերացված.

1. «Իւր-ա-քանչիւր»:

2. «Իւր-աքանչիւր»:

3. «Իւր-ա-քանչիւր»:

4. «Իւր-անձնիւր»:

5. Patrubony՝ «Իւր-ա-քանչիւր»:

Այսինքն՝ «թէ իւրքն և թէ ոչ իւրքն»:

6. Meillet. «sein cher als nicht sein», «cien plus tôt que non cien».

Այսինքն՝ «Իւր քան թէ ոչ իւր»:

Բառի բուն իմաստին ավելի մտա կարելի է համարել «Իւր-ա-քանչիւր»: «Իւր-քան թէ ոչ իւր»:

Այս բոլոր դիտողութիւնների մեջ աչնբախ նկատելի է.

1. Բառի առաջին «իւր»-ը կրկնվում է վերջում ոչ իբրեւ նույն «իւր»:

2.—«Չ» գիրը (հնչյունը) աղավաղում է բառի բուն իմաստը:

3.—«Ոչ իբրեւ նույն» իմաստն արտահայտում է՝

Patrubony՝ «քան չ», «թէ ոչ» կերպով:

Meillet՝ «քան թէ ոչ»:

Հակադրական համեմատության այս միտքը դրաբարում արտահայտվում է «քան զ» նախադրությամբ. օր. զամ քան զգամ. օր քան զօր. դար քան զդար. զի ես (գարուն) քան զամեն եղանակ սիրուն. մեծ է սէրն հայրենեաց քան զամենայն մեծութիւն. աստղ քան զաստղ առավել է փառք:

Այս բոլոր տվյալները համադրելով դուզաբար՝

«Իւր-ա-քան-չիւր» բառին առնթեր՝ չի կարելի չհանգել այն տնհողդողդ եղրակացության, որ այժմյան իւրաքանչիւրի իր նախնական կազմությամբ անշուշտ եղել է իւրաքանգիւր, իսկ աղավաղումն՝ ըստ ամենայն հավանականության՝ առաջացել է զ և չ գրերի գրչադրական շփոթությունից, որը շատ սովորական երևույթ է ոչ միայն հին, այլև նոր ձեռագրերի մեջ:

Ուրեմն՝ ոչ թե իւրաքանչիւր, երկաքանչիւր, այլ իւրաքանգիւր, երկաքանգիւր:

III

«Իւրն» դերանունն ուղղական, ուրեմն և հայցական հոլով ունի:

Հայոց լեզվի, մանավանդ գրաբարի, քերականության մեջ ընդունված և հաստատված է, որ «իւրն» դերանունը չունի ուղղական և հայցական եղովներ... այնինչ՝ սրան իմաստակից ու ձևակից «իւրն» դերանունն ունի եզակի և եզակի եղովները:

Սակայն ոչնչով չհիմնավորվող ենթադրական այս վարկածը հերքելով «եղծում է» իմաստասեր ու պերճաբան եղնիկ Կողբացին՝ տալով այդ դերանվան թե՛ ուղղական և թե՛ հայցական հոլովները՝ պատկերավոր, ծաղկուն համեմատությամբ: Այսպես՝ եղծ անդանդոյն Մարկիմնի ժա, էջ 274:

... Այլ յոյժ մոլորեալ են և մոռացան զայն, թէ չիք ծառայար, որ առնիցէ զպտուղ բարի, և ոչ քաղեն խաղող ի փշոց և ոչ թուղ ի տատասէ, և իւրն զիւրն քնդունի: Այսինքն՝ յուրաքանչիւր ինքնություն — եւթյուն յուրահատուկ ինքնություն է առաջացնում, ծնում, բերում:

Հետևապես թույլ կարվի ինձ՝ վստահանալ ասելու, որ այդ

գերանվան անդամատումը, երևի, մի պատահական անտեսումն է, թերեւ լատինական *se, sui* օրինակով (Արմ. բառ.), մանավանդ որ հապավումն ըստ ինքյան վերաբերում է միայն ուղղական հոլովին, իսկ հայցականը նրա անխախտ հարաձնունդն է: Սեռական հոլովն էլ պիտի լինի՝ իւրեան (յուրյան)-ին-ի (ինքեան) օրինակով:

Ուշագրավ է նաև այն, որ ինքն և իւր(ն) դերանունները հոլովական միևնույն ձևակերպությունն ունեն թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերում՝ բացառութեամբ միայն ուղղական հոլովի, որը թյուրիմացաբար զրկվել է «ն»-ից: Ուրեմն՝ հանուն գիտական ճշմարտութեան՝ պիտի վերականգնել դերանվան ամբողջությունը և վերացնել անհարիր բացառությունը:

